ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 20 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Ժիրայր Սեֆիլյանի, Գեւորգ Սաֆարյանի, Գարեգին Չուգասզյանի եւ Արամ Հակոբյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Ժիրայր Սեֆիլյանը, Գեւորգ Սաֆարյանը, Գարեգին Չուգասզյանը եւ Արամ Հակոբյանը 2016 թվականի հունիսի 3-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի «եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը դատախազի կողմից բողոքարկվող որոշման օրինականությունը ստուգված լինելու պայմաններում դրա պահանջի պարտադիր լինելու մեկնաբանության մասով»:

Դիմողները գտնում են, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է պայման՝ մինչև նախաքննության մարմնի որոշման դեմ դատարան բողոք ներկայացնելն սպառել արտադատական պաշտպանության միջոցը, այն բացառապես ձեւական բնույթ է կրում, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունը այն կայացվելուց հետո անմիջապես ստուգվում է հսկողություն իրականացնող դատախազության կողմից:

Ըստ դիմողների՝ իրենք չեն կատարել օրենքով սահմանված՝ արտադատական բողոքարկման պահանջը, քանի որ դա կրելու էր ձեւական բնույթ այնքանով, որքանով իրենց գործով նախաքննության ընթացքում նախաքննության օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է անմիջապես ՀՀ գլխավոր դատախազությունը, այսինքն՝ անմիջապես վերադասը, ուրեմն՝ վերադաս ատյանն արդեն (ստորադաս ատյանի առկայության բացակայությունը) բացակայում է:

Դիմողները ներկայացրել են միջնորդություն պետական տուրքի վճարումից իրենց ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ հիշյալ դիմումով գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ անգործության վերաբերյալ բողոքները, իսկ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներին ու գործողություններին, հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չէր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների անգործությանը: Մինչդեռ, գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերագրել է նաև անգործությանը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը կարող է, մի կողմից՝ գործողությունների և որոշումների, մյուս կողմից՝ անգործության համար սահմանել դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր: Ընդ որում, սահմանադրական դատարանն իր որոշման 8-րդ կետում հստակ նշել է, որ դատարան դիմելու կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների, կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանի նշյալ որոշման վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել միայն անգործության մասով, իսկ գործողությունների և որոշումների դատական կարգով բողոքարկման համար արտադատարանական պաշտպանության միջոցի սպառման պահանջը համարվել է իրավաչափ:

Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ վերջինիս շրջանակներում իրավակիրառական պրակտիկան զարգացել է ՀՀ սահմանադրական դատարանի նշյալ որոշման պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ժիրայր Սեֆիլյանի, Գեւորգ Սաֆարյանի, Գարեգին Չուգասզյանի եւ Արամ Հակոբյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

20 հունիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-16